մշտապատկառ եւ կորագլուխ ահիւ կամ.
արի։

Բախանալ բնաւ ոչ կարեմ զի եմ լի
անչափ մեղաք որ ի թիւ ոչ արկանի.
կարօտ եմ սուրբ դիթոյդ քո մայրականի.
արի արի արի սէր։

Ահա լալով առ քեզ գոչեմ, ով սուրբ մայր.
զի դու ես լի եօթնեակ շնորհօք միշտ եւ յար.
մաքուր տաճարդ Մեսիայի, լեր ինձ ճար.
արի։

Պատուար անխախտ սրովբէ մաքուր եւ տաճօղ
վասն իմ հիքոյս լեր որդւոյդ բարեխօսօղ
զի դու ես մայր հաստչին հանրից եւ տածօղ
արի արի արի, սէր իմ։

Երանուհի մայր եւ աստղ առաւօտեան,
զի դու ես ծնօղ անեղ գոյին մանկութեան,
զքեզ աղաչեմ, լեր ինձ ամրոց փրկութեան,
արի արի։

Տաճար պայծառ երանելի սուրբ դշխոյ.
յօրինեցար ի մէջ նահանգին Կարնոյ.
լուսով քոյին զնսեմ անձն իմ փայլեցոյ,
արի։

Էին սրբոյ տաճար փառաց կաղմեցար.
անեղ գոյին ցանկալի մայր ընտրեցար.
յոգունց լեզուաց երանիկ գրուատեցար։
արի արի արի, սէր իմ, զկս փրկեայ։

Եթէ կամիս լինել բարեղք երգս երգօղ,
Ուսիր զգիրս արտաքինս եւ լեր հետեւօղ։
վերջ տաղիս։

(Մատրն. Մխիթ. Վիեննա, թ. 156, թղ. 69բ—70բ։ Սկզբնագիրք՝ "ի կարապետէ„։)